ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

02 ՀՈՒՆԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Արսեն Հակոբյանը, Վահե Հարությունյանը, Կարեն Ադամյանը, Սամվել Մալխասյանը, Անի Առաքելյանը, Սիմոն Պետրոսյանը, Ծովինար Ալեքսանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ասլան Ավետիսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արթուր Մուսիկյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել նիստի հետևյալ օրակարգը.
1) Արարատ համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 2-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման արդյունքների մասին:

3) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի հոդվածներում փոփոխություն կատարելու մասին:
4) «Վայտ Սթոն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների հանքավայրի արևմտյան տեղամասի հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին:
5) Արարատ համայնքի քաղաք Արարատ Աղասի Խանջյան փողոց 10 շենք բնակարան 6 հասցեում գտնվող գույքի նվիրատվության մասին:
6) Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի /հենասյուն/ օգտագործման իրավունքի տրամադրման մասին:
7) Արարատ համայնքի Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին:
8) Արարատ համայնքի ավագանու 2024թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 182-Ա որոշումը անվավեր ճանաչելու մասին:
9) Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 03-013-0561-0105 կադաստրային ծածկագիրը կրող 2,72386հա հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին:
10) Արարատ համայնքի Սուրենավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
11) Արարատ համայնքի Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն տալու մասին:
12) Արարատ համայնքի Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 03-043-0173-0003 կադաստրային ծածկագիրը կրող 14,2404 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին:
13) Արարատ համայնքի Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 03-043-0090-0001 կադաստրային ծածկագիրը կրող 9.93034 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին:
14) Արարատ համայնքի Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 03-043-0176-0001 կադաստրային ծածկագիրը կրող 11.05493 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, խոտհարքը

վարձակալությամբ տրամադրելու մասին:
15) Արարատ համայնքի Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 03-043-0172-0072 կադաստրային ծածկագիրը կրող 47.68279 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, խոտհարքը վարձակալությամբ տրամադրելու մասին:
16) Արարատ համայնքի Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 03-043-0199-0033 կադաստրային ծածկագիրը կրող 71.20003 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, այլ հողատեսքը վարձակալությամբ տրամադրելու մասին:
17) Արարատ համայնքի Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 03-043-0185-0024 կադաստրային ծածկագիրը կրող 2.65868 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին:
18) Արարատ համայնքի Զանգակատուն բնակավայրի վարչական տարածքում գտնվող,պետական սեփականություն հանդիսացող 03-043-0199-0045 կադաստրային ծածկագիրը կրող 98.1707 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին:
19) Արարատ համայնքի Նոյակերտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 03-066-0148-0012 կադաստրային ծածկագիրը կրող 0.206 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին:
20) Արարատ համայնքի 2026 թվականի բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին:
21) ԱՅԳ ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպությանը ֆինանսական աջակցություն հատկացնելու թույլտվություն տալու մասին:
22) Արարատի Արաքս ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպությանը ֆինանսական աջակցություն հատկացնելու թույլտվություն տալու մասին:
23) Արարատ համայնքի Արարատ քաղաքի թիվ 1 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում յոթերորդ և Արարատ համայնքի Արարատ քաղաքի Մովսես գորգիսյանի անվան թիվ մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ութերրորդ խմբեր բացելու և Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 12-ի N 218-Ա, 2025թվականի փետրվարի 14-ի N 4-Ա որոշումների մեջ փոփոխություն կառտարելու մասին:

«Կայունություն» խմբակցության ղեկավար Ֆիրդուս Զաքարյանը նկատեց, որ օրակարգի նախագծերին կցված չեն ավագանու մշտական հանձնաժողովների

կարծիքները:
Ուստի, առաջարկեց, ավագանու մշտական հանձնաձողովների կարծիքները կցել նախագծերին և ավագանու նիստը տեղափոխել այլ օր:

Ավագանու անդամներ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՖԻՐԴՈՒՍ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՍՊՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼԱՐԻՍԱ ԹՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌԻՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՂԱՄ ՍԻՆԱՆՅԱՆ

ՍԵՐԳՈ ՄԻՆԱՍՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՎԱԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԶԵՅՆԱԼՅԱՆ

Ավագանու նիստին ներկա ավագանու անդամների համաձայնությամբ որոշվել է նիստը տեղափոխել այլ օր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արթուր Մուսիելյանը

_____